Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 395 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է մասնակի վերանորոգել ՀՀ Սյունիքի մարզի 5 դպրոցներ, որի արդյունքում կստեղծվեն բարելավված սանիտարահիգիենիկ պայմաններ և բարելավված կրթական միջավայր կրթօջախների 1967 աշակերտների ուսուցումը կազմակերպելու համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	ՄԱԿ-Ի Մանկական Հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) Հայաստանյան ներկայուցչություն (ՀՀ, 0010, ք. Երևան, Պետրոս Ադամյան փող., 14 շենք)
4.	Ծրագիրը կատարողը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, (ք. Երևան 0010, Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ, Սյունիքի մարզ քաղաք Կապան, Լեռնագործների 16 քաղաք Կապան, Մ. Հարությունյան 5ա քաղաք Գորիս, Սյունիքի 183 գյուղ Բռնակոթ գյուղ Որոտան Բնագավառը՝ կրթություն
6.	Ծրագրի բյուջեն	59,727,000 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնք, Գորիս համայնք, Գորիս համայնքի Որոտան բնակավայր, Սիսիան համայնքի Բռնակոթ բնակավայր
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի մայիսի 7-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 30-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերանորոգել Բռնակոթի միջնակարգ դպրոցի 4 սանհանգույցները, Կապանի N 1 հիմնական դպրոցի 4 սանհանգույցները, Որոտանի միջնակարգ դպրոցի 1 սանհանգույցը և խոհանոցը, Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 4 սանհանգույցները, Կապանի թիվ 6 հիմական դպրոցի 4 սանհանգույցները: Բյուջե՝ 59,727,000 դրամ Ժամկետ՝ 2022 թվականի մայիսի 7-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 30-ը
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 59,727,000 դրամի չափով՝ Սյունիքի մարզի 5 դպրոցներում իրականացվելիք շինարարական աշխատանքների համար:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագիրը չի նախատեսում կազմակերպական ծախսեր:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Սույն ծրագրի իրականացման շրջանակներում Հայ օգնության ֆոնդը համագործակցելու է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ու Սյունիքի մարզպետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է Հայ օգնության ֆոնդի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

08.06.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ